ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն/

Հայաստանի Սոցիալական Նեղրումների Հիմնադրամ

Ծրագրի անվանումը: Ֆինանսական միջոցների հայթայթման, հասարակական կապերի ու քարոզչական քաղաքականության մշակում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ SDC-06

Հայաստանի սոցիալական նեղրումների հիմնադրամ (ՀՄՆՀ) ստացել է դրամաշնորհ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալությունից (ՇԶՀԳ) և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Ֆինանսական միջոցների հայթայթման, հասարակական կապերի ու քարոզչական քաղաքականության մշակման համար:

Առաջադրանքի նպատակը. Սույն առաջադրանքի նպատակն է վերլուծել միջազգային և տեղական փորձը, քարոզչական գործունեության մեթոդներն ու եղանակները:

Խորհրդատուն պետք է՝

- Մշակի ֆինանսական միջոցների հայթայթման մեթոդներն ու մեխանիզմները՝ ներգրավելու համար տեղական, օտարերկրյա և միջազգային դոնոր կազմակերպություններ և մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ ՀՄՆՀ-ի գործունեության մնջ.
- Մշակի ՀՄՆՀ-ի քարոզչական քաղակականությունը՝ ՀՄՆՀ նոր ռազմավարության պահանջներին համապատասխան.

Առաջադրանքի տևողությունը 90 օր:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Ընտրության չափանիշներն են.

☐ Տնտեսագիտության, ֆինանսերի, սոցիոլոգիայի կամ կառավարման ոլորտում մասնագիտական որակավորում.

☐ Ընդհանուր փորձառություն / Կատարված աշխատանքների ցանկ և համառոտ նկարագրություն.

- Վերջին 10 տարվա ընթացքում հետազոտական և վերլուծական աշխատանքի փորձ ֆինանսական միջոցների հայթայթման, հասարակության հետ կապերի կամ կառավարման ոլորտում.

- Վերջին 10 տարվա ընթացքում ֆինանսական միջոցների հայթայթման, հասարակության հետ կապերի կամ կառավարման ոլորտում աշխատելու կամ խորհրդատվական ծառայությունների մատուցման փորձ:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-իփոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011» («Խորհրդատուների Ուղեցույցներ» (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January, 2011) բաժին V-ում սահմանված Անհատ խորհրդատուների ընտրության ընթացակարգերին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՄՆՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2014 թ. հոկտեմբերի 31-ը, ժամը 17:00-ը:

Հայասանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ

Ձեռքբերումների բաժին

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42